**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

« » 2021 թ. N

Ձեր 348-21

18.11.2021թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ՆԱԽԱԳԱՀ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

ԷԼ. ՓՈՍՏ՝ FOI@FOI.AM

Հարգելի՛ տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր 2021թ. նոյեմբերի 18-ի գրության՝ տեղեկացնում ենք, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում միայն կամավոր կենսաթոշակային ֆոնդերը (կենսաթոշակային ֆոնդի կառավարիչները). բանկերը և ապահովագրական ընկերություններն իրավունք ունեն առաջարկելու կամավոր կենսաթոշակային սխեմաներ:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ ներկայացնելու իր կուտակած միջոցները (իրեն պատկանող կենսաթոշակային ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հաշվարկային արժեք, ավանդի գումար, ներառյալ՝ հաշվեգրված տոկոսները, վճարված ապահովագրավճարներ, այլ հատուցումներ՝ նվազեցված ապահովագրության պայմանագրի կնքման և կատարման ծախսերը միանվագ վճարելու պահանջ, եթե տվյալ մասնակցի կողմից համապատասխան կենսաթոշակային ֆոնդին, բանկին կամ ապահովագրական ընկերությանը առաջին կենսաթոշակային վճարի կատարման, ավանդի ներդրման կամ ապահովագրավճարի վճարման օրվանից անցել է առնվազն երկու տարի, բացառությամբ սույն օրենքի 70-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Օրենքի 70-րդ հոդվածը վերաբերում է այն դեպքերին, երբ գործատուներն իրենց վարձու աշխատողներին լրացուցիչ (կորպորատիվ) կենսաթոշակներ տրամադրելու նպատակով կարող են կամավոր կենսաթոշակային սխեմաներ ձեռք բերել՝ կամավոր

կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչներից կամ ապահովագրական ընկերություններից:

Օրենքի 62-րդ, 63-րդ և 64-րդ հոդվածների համաձայն՝ ապահովագրական ընկերությունները, բանկերը, կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կենսաթոշակները վճարվում են օրենքով և, համապատասխանաբար, կամավոր կենսաթոշակի (անուիտետի) պայմանագրով սահմանված կարգով կամ կուտակային կենսաթոշակային ավանդի պայմանագրով սահմանված կարգով կամ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և կամավոր կենսաթոշակային ֆոնդի կանոններով սահմանված կարգով ու պայմաններով:

Ըստ այդմ, կամավոր կենսաթոշակային սխեմաների վերաբերյալ պարզաբանում ստանալու համար խորհուրդ է տրվում դիմել կամավոր կենսաթոշակային սխեմաներ առաջարկող կազմակերպություններ:

Recoverable Signature

X

ԶԱՐՈՒՀԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: MANUCHARYAN ZARUHI 6801960849 **Զ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

Կատարող՝ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

Հեռ.՝ 010 52 14 31